ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-27

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» 01 2022թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանի, որը գործում է նախագահության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ ՊՈԱԿ -ը (այսուհետ՝ Կազմակերպություն),ի դեմս տնօրեն (ռեկտոր) Վիկտոր Կատվալյան-ի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով նքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված 142.359.600 (մեկ հարյուր քառասուներկու միլիոն երեք հարյուր հիսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 142.359.600 (մեկ հարյուր քառասուներկու միլիոն երեք հարյուր հիսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ՝ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ

ք. Երևան, Բաղրամյան 24

Հ/հ 900018005182

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝

(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԱՌՅԱՆ

Կ. Տ.

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
ՊՈԱԿ
Ք. Երևան, Գ. Լուսավորչի 15

Հ/Հ 900018005489

ՀՎՀՀ 01505307

ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Տնօրեն (ռեկտոր)՝

(ստորագրություն)

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (_____)

(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված N 1
«27» 01 2022 թ.
N Ե-27 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ա. Սաղյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Վ. Կատվալյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27» 01 2022 թ. N Ե-27 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 142.359.600 (մեկ հարյուր քառասուներկու միլիոն երեք հարյուր հիսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀԳԱԱ	Կազմակերպություն
Նախագահ՝	Տնօրեն (ռեկտոր)՝
(ստորագրություն)	(ստորագրություն)
ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆ	Վ. ԿԱՏՎԱԼՅԱՆ

Հավելված N 2
«27» 01 2022 թ.
N Ե-27 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը.

Աշխատանքի հիմնական նպատակներն են՝ ա) հայոց լեզվի շարունակական և համակողմանի ուսումնասիրությունը, բ) ընդհանուր, համեմատական և կիրառական լեզվաբանական հետազոտությունների ծավալումը, գ) լեզվաքաղաքական ու լեզվամշակութային, գրական լեզվի կանոնարկման խնդիրների առաջքաշումն ու դրանց լուծմանը նպաստելը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները.

Գիտական հետազոտություններն իրականացնել տեսական, փորձառական եղանակներով, համեմատական, վերլուծական, պատմահամեմատական, պատմական-նկարագրական, կառուցվածքային-նկարագրական մեթոդներով: Առանձին իրողություններ քննել լեզվաբանական աշխարհագրության, համեմատական և պատմական մեթոդներով, զուգաբանական-վիճակագրական և բառավիճակագրական սկզբունքների կիրառմամբ: Գիտահետազոտական աշխատանքները կատարել լեզվական նյութի համակողմանի քննությամբ, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, գիտական պատշաճ մակարդակով կատարված արժեքավոր հետազոտություններով համալրել հայերենագիտության տարբեր ոլորտները: Գիտական արդյունքները ներկայացնել զեկուցումներում և գիտական հրապարակումներում:

4. Աշխատանքի բովանդակությունը.

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կատարվող գիտական հետազոտությունները ընդհանուր առմամբ ունեն հիմնարար բնույթ և կիրառելի են հայերենագիտության ու հայագիտության ոլորտներում: Ինստիտուտի գիտահետազոտական թեմատիկան ընդգրկում է չորս գիտական ուղղություններ՝ ա) արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ, բ) հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր, գ) հայ բարբառների ուսումնասիրություն, դ) ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» ուղղության շրջանակում հետազոտություններ են ընթանում հայերենի ուսումնասիրության տարբեր բնագավառներում՝ ընդգրկելով քերականական ու բառապաշարային համակարգերին վերաբերող արդիական և դեռևս ամբողջովին չլուսաբանված թեմաներ, որոնք միտված են իրողությունների նորովի մեկնաբանությանը, վերլուծությանն ու նկարագրությանը, հայ լեզվաբանական մտքի հետագա զարգացմանը: Այս ուղղությամբ նախատեսվում է կատարել արդի հայերենի քերականության, բառապաշարի մի շարք իրողությունների, տեքստի լեզվաբանության ու շարահյուսության տարաբնույթ հարցերի դիտարկում, գրական հայերենի կառուցվածքի և գործառության, կանոնարկման խնդիրների քննություն, տարբեր բնագավառների տերմինահամակարգերի ուսումնասիրություն, կկազմվեն նորաբանությունների բառարաններ, տարբեր ոլորտների տերմինարաններ:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» ուղղության շրջանակում հետազոտությունների նպատակն է լեզվի զարգացման տարբեր փուլերում հայերենի բառային կազմի և քերականական կառուցվածքի փոփոխությունների ու դրանց օրինաչափությունների վերհանումն ու վերլուծությունը, հայերենի և այլ լեզուների բառապաշարային աղերսների քննությունը: Այդ առումով արդիական են ոլորտային բառապաշարի ձևաիմաստային խմբերի ու բառակազմական իրողությունների դիտարկումը, ճյուղային տերմինաբանության պատմական քննությունը, բառապաշարային հնաբանությունների հետազոտությունը: Կարևորվում են ձեռագիր քերականությունների, ինչպես նաև բառարանների ու բժշկարանների բառապաշարի քննությունը, ձեռագրերի հիշատակարանների լեզվի ուսումնասիրությունը:

«Հայ բարբառների ուսումնասիրություն» ուղղության շրջանակում արդիական են տեսական բարբառագիտական խնդիրների արծարծումը, բարբառների բառապաշարի ու քերականական համակարգերի քննությունը, բարբառային միավորների պատմական ու համեմատական ուսումնասիրությունը, դեռևս չուսումնասիրված բարբառային միավորների հետազոտությունը: Կդիտարկվեն լեզվի պատմական զարգացման ընթացքը ներկայացնող բարբառային իրողություններ, բարբառներում պահպանված լեզվական տարբեր շերտեր, լեզվի զարգացման ընդհանուր օրինաչափություններով մեկնաբանվող կամ դրանցից շեղվող բարբառային երևույթներ և այլն: Կշարունակվեն բարբառային նյութերի հավաքման ու թվայնացման, ՀԲԱ ծրագրով հավաքված նյութերի համալրման և թվայնացման աշխատանքները: Հետազոտությունների արդյունքները կնպաստեն լեզվի պատմության, բանագիտության ու ազգագրության տարբեր խնդիրների պարզաբանմանը:

«Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» ուղղության շրջանակում ընդհանուր լեզվաբանական հայեցակետով կատարվում են բառաքննական ու ստուգաբանական ճշգրտումներ ստուգաբանական բառարանների մեջ, լեզվամշակութաբանական հարացույցի դիտարկում, բայի սեռի քերականական կարգին առնչվող տիպաբանական հետազոտություն, հնչյունական ու քերականական համակարգերի համեմատական հետազոտություն, հայերենի և այլ լեզուների փոխառնչությունների ուսումնասիրություն:

Կիրառական լեզվաբանության ուղղությամբ կատարվում են փորձառական հնչյունաբանական հետազոտություններ, դիտարկվում են բաղադրյալ կազմությունների ձևային նկարագրության խնդիրներ, համաբարբառների համակարգչային մշակման եղանակներ, շարունակվում են հայ մատենագրության համաբարբառների շտեմարանի կազմման աշխատանքները: Կատարվող աշխատանքները միտված են նպաստելու ժամանակակից համակարգչային լեզվաբանության նորագույն գաղափարների ու միջոցների օգտագործմանը, որոնց յուրացումը էական նշանակություն կունենա հայագիտության հետագա զարգացման համար:

Ծրագրի շրջանակում գիտական հետազոտություններն իրականացվում են տեսական, փորձառական եղանակներով, համեմատական, վերլուծական, պատմահամեմատական, պատմական-նկարագրական, կառուցվածքային-նկարագրական մեթոդներով: Առանձին իրողություններ քննվում են լեզվաբանական աշխարհագրության, համեմատական և պատմական մեթոդներով, զուգաբանական-վիճակագրական և բառավիճակագրական սկզբունքների կիրառմամբ:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական ուղղությունների շրջանակներում 2022 թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ընդհանուր ու համեմատական լեզվաբանության ուսումնասիրության ուղղությամբ 2022 թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

- Նյութեր հայերեն ստուգաբանական բառարանի համար (շարունակություն),

- Հնդեվրոպական բաղաձայնների և բաղաձայնական կապակցությունների արտացոլումը հայերենում և գերմանական լեզուներում,
- Հայերենի արաբական փոխառությունների բարբառային բառաշերտը (շարունակություն),
- Ներգործաձև-կրավորաձև խոնարհումային հակադրության ձևաբանական արտահայտու - թյունը հայերենի բարբառներում,
- Հայ-քարթվելական լեզվական առնչություններ (շարունակություն),
- Ժամանակակից գրական արևելահայերենի անցյալ կատարյալի և ժամանակակից գերմաներենի անցյալ կատարյալի տիպաբանություն:

Կիրառական լեզվաբանության ուղղությամբ 2022 թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

- Հարցական նախադասությունները Երեմիայի արևելահայերեն և արևմտահայերեն մարգարեություններում,
- Ածանցավոր կազմությունների ձևային նկարագրության խնդիրները,
- Ուժգնության և տևողության փոփոխությունները տարբեր ոճերի խոսքում:

Շարունակվելու են «Հայ մատենագրության և տպագիր գրականության էլեկտրոնային համաբարբառ» շտեմարանի կազմման աշխատանքները:

Բ. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» ծրագրի ուղղությամբ 2022 թ. կատարվելու են հետևյալ թեմաները՝

- Ղարաբաղի բարբառի բառային հնաբանությունները,
- «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանների ընդհանուր բնութագիրը,
- Հայերենի երաժշտական ոլորտի բառապաշարի քննություն լեզվի պատմության հին շրջանի նախամիջին ենթաշրջանում (VIII-XI դարեր),
- Օտար բառերի գործածությունը 12-13-րդ դարերի մատենագրության մեջ,
- Իրավագիտական հասկացությունները Գ. Տաթևացու «Գիրք հարցմանցում»,
- «Լուծմունք յաղագս քերականութեան » (ԺԵ դ.) երկի ուսումնասիրություն,
- Ա. Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկի մասնագիտական բառապաշարի քննություն,
- Կենդանիների անուններով կազմված դարձվածքների կառուցվածքը հայերենում և պարսկերենում:

Գ. ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայ բարբառների ուսումնասիրության ուղղությամբ 2022 թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

- «Հայ բարբառագիտություն» ակադեմիական միհատորյակի ստեղծման աշխատանքներ. հայ բարբառների պատմական շերտերի քննություն,
- Բուսանունները հայերենի բարբառներում (ծաղկանուններ),
- Չուսումնասիրված բարբառային միավորների հետազոտություն (Մեբաստիայի բարբառի քննություն, կրոնափոխ համշենահայերի բառապաշարի քննություն),
- Հինհայերենյան իրողություններ Նախիջևանի տարածքի բարբառային միավորներում,
- Մշո բարբառի քննություն,
- Բարբառային աղյուսակների կազմում՝ ըստ Գ. Ջահուկյանի նշած բարբառային հատկանիշ- ների (Արագածոտնի և Շիրակի մարզեր),

Շարունակվելու են հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի թվայնացման աշխատանքները (քերականական զուգաբանությունների մուտքագրում):

Դ. ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Արդի արևելահայերենի ուսումնասիրության ուղղությամբ 2022 թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

- Վիեննայի Մխիթարյանները և աշխարհաբարի հարցերը 19-րդ դարի երկրորդ կեսին,
- Քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերի կիրառության կանոնարկման հարցեր,
- Երգիծանքի լեզվառճական միջոցները Ն. Պեշիկթաշլյանի գրական դիմանկարներում,
- Հատկական փոխառությունների քննություն ըստ առարկայաթեմատիկ խմբերի,
- Ստոմատոլոգիական տերմինների դասակարգում և հետազոտում,
- Շարահյուսական կապակցությունների դրսևորումները չափածոյում (բանաստեղծություններ),
- Բառակազմությունը «հագուստ» իմաստային-թեմատիկ խմբի բառաշերտում,
- Բառակազմության հարցերը Գ. Սևակի և Ա. Ղարիբյանի աշխատություններում
- Քերականական շեղումները արդի հայերենում,

Բառարանագրության ոլորտում շարունակվելու են աշխատանքները «Արդի հայերենի նորաբանությունների բառարանի» կազմման ուղղությամբ. («Նոր բառերի» հերթական պրակի նյութերի հավաքում):

Արդի արևմտահայերենի ուսումնասիրության բնագավառում 2022 թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

- «Արևմտահայերենի դարձվածաբանական բառարանի» կազմում,
- Փոխառյալ բառերը գրական արևմտահայերենում,
- Նորակազմությունների կիրառական արժեքը արևմտահայ մամուլում (Նոր Յառաջ, Հայրենիք, Հորիզոն),
- Արևմտահայերենի շարահյուսությունը (շարունակություն),
- Հայերենի տաղաչափական համակարգի ուսումնասիրության պատմական զարգացումը

Շարունակվելու են աշխատանքները «Նորաբանություններ արևմտահայերէնի մէջ» բառարանի հերթական պրակի կազմման ուղղությամբ:

5. Ակնկալվող արդյունքները.

Ակնկալվող արդյունք	միավոր	քանակ
Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներ	հատ	3
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներ	հատ	30
Այլ պարբերականներ/հոդված ժողովածուի մեջ	հատ	40
Գիտաժողովի նյութեր	հատ	15
Արտոնագրեր		
Գրքեր, մենագրություններ	հատ	20
Այլ արդյունք (նշել յուրաքանչյուրի համար առանձին)		

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Վ.Կատվալյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Վ.Կատվալյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված 3

«27» 01 2022 թ.

N Ե-27 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ*

«Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի

հ/հ	Իրականացվելիք միջոցառման անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները (այդ թվում՝ Հավելված N 2-ի 5-րդ կետում նշված ակնկալվող արդյունքները)	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում	Գիտական նյութի դասակարգում, օրինչափությունների բացահայտում	հունվար-մարտ	
2	Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր		Ծանոթացում տեսական գրականությանը	Տեսական և կիրառական բնույթի եզրահանգումներ և առաջարկություններ		
3	Հայ բարբառների ուսումնասիրություն		Նյութերի մշակում, քննարկում, պլանավորում			
4	Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ			մոտ 20 գիտական հրապարակում		28471.9
1	Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում	Գիտական նյութի դասակարգում, օրինչափությունների բացահայտում	կիսամյակի վերջ	
2	Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր		Ծանոթացում տեսական գրականությանը	Տեսական և կիրառական բնույթի եզրահանգումներ և առաջարկություններ		
3	Հայ բարբառների ուսումնասիրություն		Նյութերի մշակում, համակարգում, քննարկում,			
4	Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ		Շարադրանք	մոտ 30 գիտական հրապարակում		35589.9
1	Ընդհանուր ու	Տե՛ս Աշխատանքի	Նյութերի հավա-	Գիտական նյութի		

	համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր 2 Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր 3 Հայ բարբառների ուսումնասիրություն 4 Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ	բովանդակությունը, նաև անհատական պլանները	քում Ծանոթացում տեսական գրականությանը Նյութերի մշակում, համակարգում, քննարկում, Շարադրանք	դասակարգում, օրինչափությունների բացահայտում Գիտական հետազոտությունների արդյունքների ներկայացում զեկուցումներում և հոդվածներում մոտ 30 հրապարակում	հոկտեմբեր	35589.9
	1 Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր 2 Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր 3 Հայ բարբառների ուսումնասիրություն 4 Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում Ծանոթացում տեսական գրականությանը Նյութերի մշակում, համակարգում, քննարկում, Շարադրանք	Գիտական նյութի դասակարգում, օրինչափությունների բացահայտում տեսական և կիրառական բնույթի կարևորագույն արդյունքների և ձեռքբերումների ամփոփում մոտ 30 գիտական հրատարակություն	տարեվերջ	42707.9
	Ընդամենը՝					142359.6

Կազմակերպության տնօրեն՝ _____ ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ
(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված N 4
«21» 01 2022 թ.
N Ե-27 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	135967.7	*27193.5*	*33991.9*	*33991.9*	*40790.4*
2	տնտեսական և այլ ծախսեր	6391.9	*1278.4*	*1598.0*	*1598.0*	*1917.5*
ԸՆԴԱՄԵՆԸ		142359.6	*28471.9*	*35589.9*	*35589.9*	*42707.9*

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Վ. Կատվալյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (Ս. Սոլակյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված N 4.1
«27» 01 2022 թ.
N Ե-27 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	1530.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*1100.0*
	գազի ծառայություն	
	ջրամատակարարման ծառայություն	*180.0*
	կապի ծառայություն	*250.0*
	աղբահանություն	
2	Գույք	500.0
3	Սարքեր և սարքավորումներ	1100.0
4	Նյութեր	261.9
5	Գործուղումներ	
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	
7	Արշավախմբեր	
8	Հրատարակման ծախսեր	1500.0
	.....	1500.0
Ընդամենը		6391.9

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Վ. Կատվալյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ (Ս. Սոլակյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.